



«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ

Ներառական կրթությունը դպրոցում

ԱՌԱՐԿԱ

Հայոց լեզու Գրականություն

ՀԵՂԻՆԱԿ

Նաիրա Մարտիրոսյան

ՄԱՐԶ

Արմավիր

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

Մարգարայի միջն. դպրոց

Բովնդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ.....4-6

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐՆՈՒ
ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....6-7

Համընդհանուր ձևավորում և կրթության առանձնահատուկ պայմանների
կարիք.....7-12

Եզրակացություն.....13

Գրականության ցանկ.....14-15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Իմ ռեֆերատի թեման է <<Ներառական կրթությունը Հայաստանում>>: Իմ աշխատանքը բաղկացած է ներածությունից, հիմնական մասից և եզրակացությունից:

Իսկ ի՞նչ ենք հասկանում ներառական կրթություն ասելով: Ներառական կրթությունը հանրակրթության զարգացման գործընթաց է, որը ենթադրում է կրթության մատչելիություն բոլորի համար, երեխաների ամենատարբեր կարիքների բավարարմանն ուղղված բոլոր տեսակի միջոցների ապահովում, ինչը հանրակրթական դպրոց մտնելու այցեքարտ է ընձեռնում հատուկ կարիքներ ունեցող երեխաներին:

Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ առանձնահատուկ կրթական կարիքներ ունեցող անձանց համար:

Իմ ռեֆերատի Առաջին գլխում նկարագրել եմ ներառական կրթությունը Հայաստանի Հանրապետությունում, դրա առավելությունները և դժվարությունները: Անցում կատարել համընդհանուր ներառականացման գաղափարին նշանակում է ամբողջ համակարգը պատրաստել ներառականության, այսինքն ունենալ բաց և ճկուն ուսումնական ծրագրեր, դասավանդման ժամանակակից միջոցներ և տեխնոլոգիաներ, վերապատրաստված ուսուցիչներ, հարմարեցված և խթանող միջավայր: Այս համակարգում դեռևս առկա են մի շարք բացթողումներ և խնդիրներ, որոնք ընդհանուր առմամբ անրադառնում են ներառական կրթության որակի վրա և երբեմն ստեղծում են ձևական բնույթ կրող ներառում:

Երկրորդ գլխում անդրադարձել եմ երեխայի կրթության կազմակերպման գործընթացում ուսուցիչ- ծնող-մասնագետ համագործակցության դերին , սկզբունքների և ուղղություններին:

Դպրոցների, ծնողների, ուսուցիչների և մասնագետների միջև համագործակցությունը կրթական գործընթացի կարևոր գործոններից մեկն է , հատկապես ներառական կրթության կամատեքստում: Երբ ընտանիքն և ուսումնական հաստատությունն աշխատում են համագործակցելով, երեխայի կարիքին համապատասխան միջավայրային հարմարեցումների հարմարեցումն առավել հեշտ է դառնում , ինչի արդյունքում շահում է հենց երեխան: Չված գործոնները շատ կարևոր են երեխայի ուսումնառության համար: Այս նախադրյալներն են նպաստում որպեսզի դպրոցն ու ընտանիքն ունենան միանման սպասումներ ու օժանդակեն երեխայի ուսման գործընթացին: Այս համագործակցության արդյունքում շահում են ոչ միայն երեխան և ծնողը, այլ նաև դպրոցը:

Իսկ եզրակացության մեջ արտահայտել եմ իմ կարծիքը և փորձել եմ տալ մի քանի առաջարկություններ:

ՆԵՐԱՈՍԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետության հատուկ կրթության համակարգը ձևավորվել է դեռևս խորհրդային շրջանում: Հանրապետությունում երեխաների իրավունքների պաշտպանության համակարգված գործընթացը սկսվել է «ՄԱԿ-ի երեխայի իրավունքների մասին հռչակագրին» միանալուց հետո: 1996 թվականին ընդունվեց «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը, 1999-ին՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքը, 2001-ին՝ «Կրթության զարգացման 2001-2005 թվականների պետական ծրագիր» ՀՀ օրենքը, 2005-ին՝ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը:

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը սկիզբ դրեց հատուկ կրթական համակարգի բարեփոխումներին: Օրենքում ամրագրված է, որ «կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը, ծնողների ընտրությամբ, կարող է իրականացվել ինչպես ընդհանուր հանրակրթական, այնպես էլ հատուկ դպրոցներում՝ հատուկ ծրագրերով»:

Ներառական կրթության շնորհիվ մտավոր և ֆիզիկական զարգացման շեղումներ ունեցող երեխաները հնարավորություն են ունենում սովորել հանրակրթական դպրոցներում ոչ հաշմանդամ երեխաների հետ համատեղ:

Ներառական կրթությունը ձգտում է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցման՝ բավարարելու մարդկանց զանազան կրթական պահանջները: Եթե ներառական կրթության մտցրած փոփոխությունները ուսուցումն ավելի արդյունավետ դարձնեն, ապա կշահեն բոլոր երեխաները, այլ ոչ միայն առանձնահատուկ կրթության կարիքներ ունեցողները:

Հատուկ կարիք ունեցող երեխաների հոգեկան զարգացման առանձնահատկությունների ուսումնասիրմամբ, նրանց կրթության և դաստիարակության հարցերով լրջորեն զբաղվել է նշանավոր գրող և մեծանուն մանկավարժ Ղազարոս Աղայանը: Նրա կարծիքով այդ երեխաների կրթումն ու դաստիարակությունը, նրանց նկատմամբ հատուկ ուշադրությունը մեծ նշանակություն ունեն ոչ միայն հենց այդ երեխաների, այլև ամբողջ հասարակության դաստիարակության համար, քանի որ «եթե մարդկային ցեղի մեջ թշվառություն չլիներ, ապա և ոչ կարեկցության զգացմունք կլիներ»:

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը սկիզբ դրեց հատուկ կրթական համակարգի բարեփոխումներին: Օրենքում ամրագրված է, որ «կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը, ծնողների ընտրությամբ, կարող է իրականացվել ինչպես ընդհանուր հանրակրթական, այնպես էլ հատուկ դպրոցներում՝ հատուկ ծրագրերով:

Հանրակրթական համակարգին զուգընթաց հատուկ կրթության բարեփոխման ծրագիրը ևս հիմնված է հիմնարար երկու՝ կրթության մատչելիության և որակի

սկզբունքի վրա: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների տեսանկյունից դա ենթադրում է հավասար պայմանների ստեղծում և նրանց կարիքին համապատասխան՝ որակյալ կրթության հնարավորություն:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման կազմակերպման ռազմավարությունը կառուցվում է հետևյալ ելակետային դրույթների հիմքի վրա.

- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մյուսների հետ հավասար իրավունքներ ունեն հանրակրթական հաստատության ընտրության և պարտադիր պետական կրթական ծրագրերի յուրացման հարցում,
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներն իրավունք ունեն օգտվելու հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական և այլ ծառայություններից՝ անկախ նրանց ընտրած ուսումնական հաստատության տիպից,
- երեխայի համակողմանի բնականոն զարգացման տեսանկյունից նախընտրելի է նրա կրթության կազմակերպումը առանց ընտանիքից և հասարակությունից նրա առանձնացման:

Ներկայումս ՀՀ կրթության և գիտության համակարգում գործում է 24 հատուկ դպրոց և մեկ բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն:

Հատուկ հաստատությունների համակարգի բարեփոխումները նպատակ ունեն.

- կատարելագործելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության և խնամքի համակարգերը,
- նպաստելու գիշերօթիկ հաստատություններից երեխաներին ընտանիքներ վերադարձնելուն,
- կանխարգելելու հատուկ հաստատություններում ընդգրկված երեխաների թվի աճը:

Հատուկ կրթության համակարգի բարեփոխումների ուղղություններն են.

- հատուկ հաստատությունների համակարգի կառուցվածքային բարեփոխումներ,
- հատուկ հաստատությունների ղեկավարման և ֆինանսավորման մեխանիզմների բարեփոխում,
- հատուկ հաստատություններում իրականացվող ծառայությունների ապակենտրոնացում,
- հատուկ հաստատություններում երեխաների կրթության և խնամքի որակի բարելավում,
- հատուկ հաստատությունների ընդունելության համակարգի կատարելագործում:

Այս ուղղությունների իրականացման նպատակով ընդունվել են մի շարք իրավական ակտեր, փոփոխություններ են առաջարկվել «Կրթության մասին», «Երեխայի

իրավունքների մասին» և «ՀՀ հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքներում, ընդունվել է նաև «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության մասին» ՀՀ օրենքը: «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում /25.05.2005/.

- սահմանված են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կատեգորիաները, որտեղ չկան նախկինում ամրագրված որբ, ծնողական խնամքից զրկված երեխաների և արտակարգ ունակություններ ցուցաբերած երեխաների կատեգորիաները,

- ամրագրված է, որ երիտասարդ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը վկայագրում է տարածքային կառավարման պետական մարմինը,

- ամրագրված է «Ներառական կրթություն» հասկացությունը,

- ներառական կրթությունը՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի կրթության համար առանձնահատուկ պայմանների ապահովման միջոցով նրա համատեղ ուսուցումն է իր հասակակիցների հետ համատեղ՝ հանրակրթական դպրոցում: Նշված դրույթն ամրագրված «Կրթության մասին» ՀՀ օրենքում: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը ծնողների ընտրությամբ կարող է իրականացվել ինչպես ընդհանուր հանրակրթական, այնպես էլ հատուկ հաստատություններում՝ հատուկ ծրագրերով 19 հոդված, կետ 3: Ներառական կրթության քաղաքականության հիմքում երեխայակենտրոն մանկավարժությունն է: Մեթոդի էությունը յուրաքանչյուր երեխայի անհատական կարիքների գնահատումն է և կրթության պրոցեսին երեխայի ակտիվ մասնակցության խրախուսումը: Մեթոդի կարևոր բաղկացուցիչ մաս է կազմում բազմամասնագիտական թիմի ստեղծումը, որի մեջ ներգրավված են երեխայի կրթության համար շահագրգիռ տարբեր մասնագետներ (ընդհանուր կրթության մանկավարժ, հատուկ կրթության մանկավարժ հոգեբան, լոգոպեդ), երեխայի ծնողը և թիմի համակարգողը: Թիմը գնահատում է յուրաքանչյուր երեխայի կրթական կարիքները, հայտնաբերում է նրա առողջապահական և սոցիալական այն կարիքները, որոնք ուղղակի ազդեցություն ունեն երեխայի կրթության վրա: Մշակվում է երեխայի ուսուցման անհատական պլան՝ ուղղված կարիքի բավարարմանը: Այսպիսով, մեթոդը հնարավորություն է տալիս կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի կրթությունը կազմակերպել հասակակիցների հետ համատեղ հանրակրթական դասարանում՝ անհատական պլանով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հատուկ ծրագրերով: Ներկայումս ՀՀ կրթության և գիտության համակարգում գործում է 52 հատուկ դպրոց, որոնցից 18-ը՝ մտավոր և ֆիզիկական զարգացման շեղումներով երեխաների համար, 14-ը՝ ինտեգրացված ուսուցման(մտավոր և ֆիզիկական զարգացման շեղումներով և որբ ու ծնողական խնամքից զրկված երեխաների համար) , 12-ը՝ ուբ և ծնողական խնամքից զրկված երեխաների համար, 8-ը՝ արտակարգ ունակություններ ցուցաբերած երեխաների համար:

Նշված 52 հաստատություններում սովորում են 11500 երեխաներ, գիշերում է 4000 երեխա:

ՆԵՐԱՌԱՎԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ի՞նչու է անհրաժեշտ սահմանափակ կարողություններով երեխաներին ներառել հանրակրթական դպրոցում և ի՞նչով է դա արդարացված:

Խորհրդային տարիներին հաշմանդամներն ամբողջությամբ մեկուսացված էին հասարակությունից: Երեխաները հիմնականում պահվում էին համապատասխան հաստատություններում: Այնինչ, երեխաների մեկուսացումը դադարեցնում է նրանց ֆիզիկական, հուզական, իմացական զարգացումն ու հասունացումը: Իսկ փորձը հաստատում է, որ հաշմանդամ երեխաների շրջապատում, ավելի արագ են ինտեգրացվում, քան ապրելով մեկուսացված միջավայրում կամ էլ իր նմանի հետ: Նրանք դառնում են ավելի վստահ ու անկաշկանդ, քան հատուկ գիշերօթիկներում կրթված երեխաները:

Փորձը ցույց է տալիս, որ սահմանափակ ունակություններով երեխայի համար հիվանդության ախտորոշման և այլ դիտարկումների վրա պետք է մշակվի անհատական ծրագիր: Բայց, ամեն դեպքում, մտավոր զարգացման շեղումներ չունեցող երեխաները հանրակրթական դպրոցներում հատուկ պայմանների ստեղծման դեպքում կարող են իրենց հասակակիցների նման սովորել, հաղորդակցվել և զարգանալ:

Սակայն, սա հարցի միայն մի կողմն է: Ներառական կրթության իրականացումը կապված է մի շարք դժվարությունների հետ: Անհրաժեշտ է ոչ միայն հասարակության մտածողության վերափոխում, այլև հանրակրթական դպրոցներում որոշակի պայմանների ստեղծում: Օրինակ՝ անվասայլակ օգտագործող երեխաների համար անհրաժեշտ է դպրոցի ներսում ստեղծել հատուկ թեքահարթակներ կամ վերելակներ: Բացի այդ, փորձը ցույց է տվել, որ հանրակրթական ծրագրերը բարդ են այդ երեխաների համար: Համեմատաբար թույլ է նրանց հիշողությունը և ընկալման կարողությունը: Այդ պատճառով անհրաժեշտ է ստեղծել նաև հատուկ հեշտացված ծրագիր:

Հատուկ ուսուցման կարիք ունեցող երեխաների կրթելու դժվարությունը կայանում է նրանում, որ նրանց մոտ համեմատաբար թույլ է հիշողությունը և գիտելիքը յուրացնելու ունակությունը: Ոչ մի դեպքում չի կարելի ստիպել կամ շտապեցնել նրանց:

Հաշմանդամ երեխաների ուսուցման գործում թեպետ անուղղակի, բայց կարևոր ներդրում ունեն նաև նրանց համադասարանցիները: Դասարանի կարծիքը շատ մեծ ազդեցություն ունի նրանց վրա: Եթե նույնիսկ հաշմանդամ երեխաները հատուկ գիշերօթիկ հաստատություններում շրջապատված են մասնագետներով, համապատասխան խնամքով, միևնույնն է, իրենց շուրջը հիվանդություն են տեսնում:

Առանց այս խնդիրների լուծման ներառական կրթություն իրականացնելն անիմաստ է և անօգուտ:

Համընդհանուր ձևավորում և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք

Ներառման գործում ՈՒԸՄԿ-ի կարևոր ներդրումներից մեկը մանկավարժի ուշադրության կենտրոնացումն է սովորողների բազմատարրության վրա: Հայաստանում մասնագետների կողմից քայլեր են արվում հաշմանդամության ընկալումը վերաիմաստավորելու համար: Մանկական գրականության միջոցով մարդկանց տարբերությունների ներկայացման (Ավագյան, Բաղդասարյան և Սարգսյան, 2016) և ուսուցիչների վերապատրաստման նոր մոտեցումների մշակման շնորհիվ խորանում են պատկերացումներն ու տարբերությունների ընդունումը մարդկային բազմազանության մասին: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը գնահատելիս սովորողի խնդիրները մատնանշելու փոխարեն առանձնացվում ու մատնանշվում է նրա ներուժը: «Խորհրդային տարիներին ենթադրվում էր, որ բոլոր մարդիկ «իրար նման են», կատարյալ, գեղեցիկ, առանց խնդիրների: Բոլոր նրանք, ովքեր չէին բավարարում այս չափանիշներին (ունեին տեսողական, լսողական, ֆիզիկական, մտավոր, նույնիսկ խոսքի և հաղորդակցման խնդիրներ), մեծանում էին հատուկ (գիշերօթիկ) հաստատություններում, իրենց ընտանիքներից ու հասարակությունից առանձնացված» (Ավագյան, Բաղդասարյան և Սարգսյան, 2016): Այսօր Հայաստանում ավելի ու ավելի է տարածվում բազմազանության նկատմամբ հանդուրժողականությունը և այն փաստի ընդունումը, որ մարդիկ տարբեր կերպ են ընկալում ու իմաստավորում տեղեկատվությունը, ճանաչում պատկերները. նրանց մեջ նյութի նկատմամբ հետաքրքրություն առաջանում է ուսումնառության որոշակի մոտեցման կիրառման դեպքում (Վիգոտսկի, 1962): ՈՒԸՄԿ-ն ուշադրություն է դարձնում այն իրողությանը, որ յուրաքանչյուր դպրոցում սովորում են կրթության ամենատարբեր պայմանների կարիքներ ունեցող աշակերտներ: ՈՒԸՄԿ-ն հրաժարվում է այն տեսակետից, որ սովորողները լինում են «նորմալ» և «ոչ նորմալ» կամ սովորական և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (Ռոզ և Մեյեր, 2005): 20 Տարբերակված դասավանդումը և ուսումնառության համընդհանուր ձևավորումը ԹԵ՛ հատուկ, և թԵ՛ հանրակրթական դպրոցի մանկավարժները ծանոթ են տարբերակված ուսուցման գաղափարին: Այս ընդգրկուն հայեցակարգն ուսուցիչներին հնարավորություն է տալիս առանձին թեմաներ դասավանդելիս խնդիրները, մարտահրավերները հարմարեցնել սովորողների անհատական առանձնահատկություններին: Այսպես, ուսուցիչը կարող է ավելացնել կամ պակասեցնել բառատեստրում գրվող անձանոթ բառերի քանակը, որոնք աշակերտը պետք է սովորի մինչև նոր դաս անցնելը: Տարբերակված ուսուցումը կիրառվում է աշխարհի տարբեր դպրոցների ներառական դասարաններում և հիմնված է Վիգոտսկու «Չարգացման մոտակա գոտի» (1978) տեսության վրա, ըստ որի՝ սովորողները լավ են սովորում, երբ տրված առաջադրանքները մատչելի են, ոչ թե շատ դժվար կամ պարզունակ: Քոֆմանը և Հալահանը (2011) այս մոտեցումը որակում են որպես տեղեկատվությանը «դժվարությամբ տիրապետելու մոտեցում», համաձայն որի՝ հանձնարարությունները պետք է լինեն դժվար, բայց ոչ խրթին: Տարբերակված ուսուցումը կարող է լինել ՈՒԸՄԿ գործընթացի մի մասը: ՈՒԸՄԿ-ի ուղղությամբ իրականացված հետազոտությունները վկայում են, որ սովորողների մի մասի համար

յուրացման մակարդակը և ակնկալիքները փոփոխելու անհրաժեշտությունը կարող է նվազ լինել, եթե դասավանդելիս կիրառվեն բազմազան նյութեր: Այսպես, Էդիբըրնը (2007, 2010) ներկայացրել է դեպքեր ուսումնառության դժվարություններ ունեցող սովորողների վերաբերյալ, որոնց ուսումնառության արդյունավետությունը բարձրացել է, երբ ուսուցիչները հրաժարվել են ուսուցման ավանդական ձևերից: Նման սովորողների հետ աշխատելիս հատուկ պայմանների և փոփոխություններ մտցնելու կարիքը կարող է նվազել, եթե ուսուցիչը դասը պլանավորելիս ճկունություն ցուցաբերի: Այն դեպքում, երբ սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքները վաղորոք նկատի են առնվում և մատչելի դասավանդումը դրվում է դասի պլանավորման հիմքում, բոլորը սկսում են ավելի լավ սովորել: Ուսումնառության համընդհանուր ձևավորման շրջանակը Ուսումնառության համընդհանուր ձևավորման սկզբունքները խարսխված են ուսուցման երեք մոտեցումների վրա՝ ճանաչողական, ռազմավարական և հուզական: Ճանաչողական ուսուցումը վերաբերում է սովորողի՝ հասկացություններ ճանաչելու և մտապահելու կարողությանը: Սրան սովորաբար նպաստում է ուսուցչի աշխատանքը կամ տեքստի ընթերցումը: Ռազմավարական ուսումնառությունը վերաբերում է որոշակի բովանդակությանը, սովորողի՝ հասկացություններին արձագանքելու կարողությանը կամ հմտություններին: Ռազմավարական ուսումնառության ժամանակ սովորողը պետք է ծանոթանա (ճանաչի) և կարողանա հատուկ արձագանքել առաջադիր հարցմանը: Ուսուցման այս տեսակը հաճախ անցկացվում է գրավոր առաջադրանքների կամ դասարանում բանավոր պատասխանների միջոցով: Հուզական յուրացումը վերաբերում է սովորողի՝ նյութը յուրացնելու մոտիվացիային: Առանց մոտիվացիայի՝ սովորողների կողմից յուրացումը մակերեսային է (Մալոն և Լեպպեր, 1987, Այնսքոու, 2008, Մեգա, Ռոնքոնի և ԴեԲենի, 2014): Ուսումնառության երեք մոտեցումներն էլ ամփոփված են ստորև (տե՛ս աղյուսակ 1): Աղյուսակ 1. Ուսումնառության երեք մոտեցումներ ճանաչողական – աշակերտները ճանաչում և մտապահում են գրքում գրվածը: Ռազմավարական - աշակերտները շարադրում, վերլուծում և վերարտադրում են նյութի համառոտ բովանդակությունը: Հուզական - աշակերտները խմբերում քննարկում են նկարագրված դեպքերը և կերպարների նկատմամբ անձնական զգացմունքները: 21 Ուսումնառության համընդհանուր ձևավորման սկզբունքները ՈՒԸՄԿ-ն ունի երեք հիմնական սկզբունք, որոնք ուսուցիչներին հնարավորություն են տալիս պլանավորելու ուսումնական գործընթացը սովորողների կարիքներին համապատասխան: ՈՒԸՄԿ սկզբունքները համապատասխանում են մի գաղափարախոսության, որը խրախուսում է սովորողների տարբերությունները: Ուսուցիչները, ճանաչողական, ռազմավարական և հուզական մոտեցումները կիրառելով, կարող են նպաստել ուսումնառության արդյունքների բարելավմանը: Դասավանդման այսօրինակ ճկունությունը բացառում է ուսուցչի դասախոսություն կարդալու, սովորողների նշումներ կատարելու (դասախոսությունը գրի առնելու) և, վերջապես, անցածի վերաբերյալ քննություններ հանձնելու ավանդական մոտեցումը: Դասախոսության և ավանդական այլ մեթոդները կարող են խոչընդոտ լինել այն սովորողների համար, որոնք դժվարանում են հասկանալ ուսուցչի խոսքը, գրել կամ մտապահել: Ավանդական մոտեցումը կարող է խոչընդոտներ առաջացնել նաև այն աշակերտների համար, որոնք ավելի լավ են սովորում փոխներգործուն միջավայրերում կամ փոքր խմբերում: Ուսուցման ավանդական մեթոդները կարող են համընդհանուր ձևավորման մասը լինել, սակայն դրանք ուսումնառության ժամանակ կիրառվող բազմաթիվ մեթոդներից ընդամենը մեկն են: ՈՒԸՄԿ-ի երեք սկզբունքները. 1. Ճանաչողական ուսուցման օժանդակում նյութը ներկայացնելու բազմազան միջոցների կիրառմամբ: 2. Ռազմավարական ուսումնառության օժանդակում

արտահայտվելու համար բազմաթիվ հնարավորությունների ընձեռմամբ: 3. Հուլայական ուսուցման օժանդակում ներգրավման բազմաթիվ միջոցների կիրառմամբ: Կրթական գործընթացի հիմքում երբեմն կարող է ընկնել ՈԲԸՄԿ-ի ոչ թե մեկ, այլ մի քանի սկզբունք, քանի որ ճկուն մոտեցմամբ կազմակերպված դասերը պահանջում են բազմազան միջոցների կիրառում: Օրինակ՝ վերը նկարագրված գրքի ընթերցումը մոտիվացնող մոտեցումը կարող է դիտարկվել որպես թե՛ հուլայական, թե՛ ռազմավարական ուսումնառության տարբերակ: Հաջորդ գլուխներում կներկայացնենք նաև ուսուցիչների կողմից նյութի մատուցման, աշակերտների կողմից նյութի վերարտադրման (արտահայտվելու) և դասագործընթացում աշակերտների ներգրավման բազմազան մոտեցումների կոնկրետ օրինակներ: Ուսումնառության միջավայրի ընդհանուր ձևավորումը և ներառումը Դասարանում համընդհանուր ձևավորման գործածումը միտված է ներառական գործընթացի բարելավմանը: Համընդհանուր ձևավորումն ուղղված է սովորողների՝ որպես «սովորական» և «առանձնահատուկ» երեխաների տարբերակումը վերացնելուն՝ ելնելով այն հանգամանքից, որ յուրաքանչյուր անհատ տարբեր կերպ է սովորում և բազմազան մոտեցումների կիրառումը կօգնի բոլոր սովորողներին: Միաժամանակ ուսումնառության ընդհանուր միջավայրի ձևավորումն ավելի խոր իմաստ ունի, քան պարզապես «լավ դասավանդումը»: Ըստ Էդիբըրնի (2010)՝ ուսումնառության ընդհանուր միջավայրի ձևավորումն ուսուցիչների կողմից բազմազանության արժևորման փիլիսոփայական դիրքորոշման և միաժամանակ անընդմեջ սովորելու և կատարելագործվելու անհրաժեշտության ընդունումն է: Հեշտ չէ ունենալ ուսումնառության ընդհանուր միջավայր: Բայց երբ ուսուցիչները հիմնավորապես ընդունում են դասարաններում տարբեր ունակությունների տեր սովորողների ներկայությունը և դասագործընթացը կազմակերպում են այնպես, որ ներգրավեն բոլոր սովորողներին, ՈԲԸՄԿ-ն կատարելագործվում է: Գոյություն ունեն դասավանդման ամենատարբեր մոտեցումներ, որոնք ուսուցիչները կարող են օգտագործել դասարանում բազմազանության խթանման համար: Այս մոտեցումներից մի քանիսը նկարագրված են ստորև: Ուսումնական տարվա ընթացքում իրենց սովորողներին ճանաչելով ու օգտվելով աշակերտներին նկարագրող տեղեկատվական աղբյուրներից՝ ուսուցիչները կարող են դասավանդումը հարմարեցնել իրենց սովորողների կարիքներին: 22 Միևնույն ժամանակ ուսումնառության միջավայրի ընդհանուր ձևավորման գաղափարական հիմքը համահունչ է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի (ՄԱԿ, 2006) առավել լայն փիլիսոփայությանը: Կոնվենցիան առաջադրում է հաշմանդամություն ունեցող անձանց օժանդակության ավելի լայն հնարավորություններ ներառական ուսուցման միջոցով, որը մանկավարժներից պահանջում է ապահովել մատչելիություն բոլորի համար: Ըստ կոնվենցիայի 9-րդ հոդվածի՝ հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և կյանքի բոլոր բնագավառներում լիակատար մասնակցության հնարավորություն ընձեռելու նպատակով մասնակից պետությունները ձեռնարկում են համապատասխան միջոցներ, որպեսզի մյուսների հետ հավասար հիմունքներով նրանց համար ապահովեն ֆիզիկական միջավայրի, փոխադրամիջոցների, տեղեկատվության և հաղորդակցության (ներառյալ տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաներն ու համակարգերը), ինչպես նաև այլ պայմանների ու ծառայությունների մատչելիությունը, որոնք տրամադրվում են հանրությանը թե՛ քաղաքներում, թե՛ գյուղական վայրերում: Այս միջոցները ներառում են խոչընդոտների և արգելքների բացահայտումը և վերացումը: Գործնականում տարատեսակ միջոցների կիրառմամբ նյութ ներկայացնելը, արտահայտվելու համար բազմաթիվ հնարավորություններ ընձեռելը և սովորողի համար ներգրավվածության

բազմազան միջոցների տրամադրումը կարող են տարբեր լինել: Այսպես, դա կարող է նշանակել, ընդհանուր առմամբ, բազմազան մոտեցումների կիրառում նյութը ներկայացնելիս, բազմազան հնարավորությունների ընձեռում աշակերտներին սովորածը վերարտադրելիս և դասագործընթացում ներգրավվելիս: Օրինակ՝ ուսուցիչը կարող է ցուցադրել տողատակերով տեսահոլովակ, որպեսզի սովորողները միաժամանակ կարողանան կարդալ տեսահոլովակում ներկայացվող տեղեկատվությանը վերաբերող տեքստը: Սա կարելի է համարել լսողության խանգարում ունեցող սովորողի պայմանների բարելավում, սակայն բովանդակությունը հասկանալի դարձնելու առումով ճկուն մոտեցում է բոլոր սովորողների համար: Ստորև ներկայացված են ուսուցիչների կողմից դասարաններում ճկունություն հանդես բերելու լրացուցիչ օրինակներ

Ինչպես արդեն նշվել է, ընտանիքն իր երեխայի մասին հոգ է տանում նրա ամբողջ կյանքի ընթացքում: Կրտսեր դպրոցական տարիքում դպրոցի հետ ամուր հարաբերությունների հաստատումն օգնում է երեխային և նպաստում նրա ընտանիքի ու դպրոցի միջև հարաբերությունների զարգացմանը: Հետագայում՝ երեխայի հասունացման ընթացքում, ընտանիքում արդեն ձևավորված են լինում մասնագետների հետ աշխատելու հմտություններ: Այս գործընկերությունը պահանջում է ընտանեկենտրոն մոտեցում, ինչը չի սահմանափակվում միայն ծնողներով: Ընտանիքի վրա կենտրոնացած գործընկերային հարաբերություններում իրենց մասնակցությունն են ունենում նաև ընտանիքի մյուս անդամները՝ տատիկները, պապիկները, քույրերը, եղբայրները և նույնիսկ ընտանիքի բարեկամները (Թուրնբուլլ, Թուրնբուլլ, Էրվին, Սուդակ և Շոգրեն, 2011): Այս գլխում ընտանիք ասելով՝ հասկանում ենք մարդկանց ավելի լայն շրջանակ: Երեխայի կրթության պլանավորման գործընթացում ընտանիքին ներգրավելը հնարավոր է միայն մասնագետների՝ գործընկերության հմտություններին կատարելապես տիրապետելու դեպքում: Ցանկացած գործընկերության պարագայում կարևոր են երկուստեք ուժեղ կողմերը, գիտելիքը և առկա ռեսուրսները: Ըստ Թուրնբուլլի և ուրիշների (2011)՝ գործընկերության հաստատման և զարգացման համար առանցքային նշանակություն ունեն հետևյալ հանգամանքները. երկխոսության առկայություն, փոխադարձ հարգանք, վստահություն, արհեստավարժություն, հավասարություն և հանձնառություն: Բյուր-Բաննինգը և ուրիշները (2004) ավելացնում են նաև տվյալների գաղտնիության պահպանումը. ընտանիքը պետք է իրազեկված լինի, որ այն, ինչ իրենց ասվում է, չի կարող քննարկման առարկա լինել այլ հարթակներում: Ադյուսակ 2-ում նշված են գործընկերային հարաբերությունների զարգացման առանցքային հանգամանքները, մասնագետների գործողությունների օրինակները և տեղեկատվություն այդ գործողությունների նկատմամբ վստահություն կամ անվստահություն առաջանալու վերաբերյալ:

Ընտանիքների հետ հաղորդակցումը Ինչպես արդեն նշվել է, ուսուցիչների և ընտանիքների միջև հաղորդակցումը կրթական գործընթացի շատ կարևոր գործոն է, հատկապես ներառական կրթության համատեքստում: Կարևոր է ընդունել, որ սա և՛ ընտանիքի, և՛ մասնագետների համար շփման նոր ձև է, քանի որ մինչ այս նրանք ավելի ծանոթ էին աստիճանակարգային (հիերարխիկ) դերերին, երբ մասնագետները համարվում էին փորձագետներ, իսկ ծնողներն ընդունում էին ասված կարծիքն ու գրեթե բավարարվում հարցեր տալով: Մտածողության այդպիսի փոփոխության համար պահանջվում են նոր վերաբերմունք և նոր հմտություններ: Այստեղ կարևոր դեր է խաղում հաղորդակցումը, որը պարզապես տեղեկություն հաղորդելը չէ, պահանջում է

ամուր փոխհարաբերությունների հիմնում և ընտանիքներին արդյունավետ թիմակիցներ դառնալու հնարավորության ընձեռում: Հաղորդակցումն արդյունավետ է այն դեպքում, երբ փոխանցված տեղեկատվությունը հասկանալի է ընտանիքի անդամների համար: Հաճախ՝ հանդիպումների ժամանակ, ընտանիքի անդամների մոտ ստեղծվում է տպավորություն, որ իրենք եկել են տեղեկատվություն ստանալու: Մասնագետները սովորաբար հենց այդպես էլ վարվում են. փոխանցում են տեղեկատվություն երեխայի գնահատականների, ծրագրային նպատակների վերաբերյալ: Օգտագործվում է մասնագիտական բառապաշար, որը ոչ միշտ է հասկանալի ընտանիքի անդամներին: Հաղորդակցում, որպես այդպիսին, տեղի չի ունենում: Մասնագետական բառապաշարի օգտագործումը ծնողներին ուղղված անուղղակի ուղերձ է առ այն, որ իրենք թիմի անդամ չեն և պարզապես եկել են իրենց երեխայի մասին լսելու: Ավելին, երբեմն հանդիպմանը ներկա է լինում մասնագետների մեծ խումբ, ստեղծվում են «մենք» և «դուք» թիմեր, որտեղ թիմերը հաճախ հանդես են գալիս միմյանց դեմ: Ընտանիքում ստեղծվում է տպավորություն, որ իրենց կարծիքը չի գնահատվում: Երբեմն էլ ընտանիքներն են դիմադրում թիմում ներգրավվելուն: Նրանք չեն պատկերացնում թիմում ներգրավվելու ընթացքը, իրենց դերը երեխայի հետ աշխատանքների պլանավորման մեջ՝ կարծելով, որ դա բացառապես մասնագետի կամ ուսուցչի պարտականությունն է: Ընտանիքաբոց կապի զարգացումը, ծնողներին թիմում ներգրավելը կարևոր և նշանակալի գործընթաց է, ըստ որում, հաղորդակցումն այս գործընթացի առանցքային տարրն է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Իմ ռեֆերատը գրելու ընթացքում ես ծանոթացա ՀՀ օրենքների և որոշումների հետ ներառական կրթության մասին: Անշուշտ այս բնագավառու կատարվում են շատ բարեփոխումներ, որոնց արդյունքն արդեն նկատելի: Միզուցե ակնկալիքները շատ են, բայց այսպիսի մեծ ծրագիրը միանգամից չի կարող իրականացվել: Իմ սեփական կարծիքը ներառական կրթության մասին շատ հակասական է: Մի կողմից ճիշտ է, որ հատուկ կարիք ունեցող երեխաները ներգրավվեն հանրակրթակա համակարգ, իսկ մյուս կողմից էլ կան բազում խնդիրներ: Ներառական կրթության խնդիրը մանկավարժների կողմից միանշանակ չի ընկալվում, միաժամանակ նշվում են ուսուցման այս ձևի ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցությունները հատուկ կարիքներով երեխաների վրա: Այսինքն՝ խնդրի լուծումը ենթադրում է բազմակողմանի վերլուծություն և համալիր գործողությունների կայացում: Այս համակարգի, ավելի արդյունավետ լինելու համար, ես կփորձեմ անել մի քանի առաջարկություններ.

- կապ ստեղծել դպրոցների և հաշմանդամության խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների միջև՝ միասնական լուծելու ընթացքում ծագող խնդիրները,
- հանրակրթական դպրոցները տեխնիկապես համապատասխանեցնել հաշմանդամ երեխաների կանիքներին,

- դպրոցներում ստեղծել ներառական կրթության իրագործման համար անհրաժեշտ նյութա-տեխնիկական բազա՝ համապատասխան սարքավորումներով, գույքով և գրականությամբ,
- ապահովել հաշմանդամ երեխաների խնդիրներով զբաղվող մասնագետների առկայությունը հանրակրթական դպրոցներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Երեխաների իրավունքներին առնչվող ՀՀ օրենքների և ՀՀ այլ իրավական ակտերի ժողովածու, ՅՈՒՆԻՍԵՖ, Երևան, 2005թ., 360 էջ:

2. Թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հատուկ կրթական չափորոշիչ, Երևան, 2006թ.,

272 էջ:

3. Ժամայեկյան դեկլարացիա 1990թ

4. Հաշմանդամների համար հավասար հնարավորությունների ապահովման ստանդարտ կանոններ,

ՄԱԿ, Հոլսի կամուրջ հկ, Երևան, 1994թ., 76 էջ:

5. Համաշխարհային Կրթական Ֆորումը 2000թ.

6. Միավորված Ազգեր, 1989թ

7. Միջգերատեսչական Հանձնաժողով, 1990թ

8. ՅՈՒՆԵՍԿՕ, Բաց ֆայլ ներառական կրթության մասին, ԱՄՆ, 2004թ., 177 էջ

9. Ներառական կրթության և ծնողների խորհուրդ, 1996թ 28 էջ

10. Չափավոր և ծանր մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հետ աշխատող հատուկ

մանկավարժի ուղեցույց, Երևան, 2008]

11. Պիդջլ, Մեյջեր, Խեգարտի, 1997թ.

12. Օրենքներ՝ հաշմանդամ երեխաների կրթության իրավունքների մասին, 'Հոլսի կամուրջ' հկ, Երևան,

1999թ., 16 էջ:

13. Кафьян Э. М., Азарян А. Р. Интегрированное обучение и воспитание детей с отклонениями развития в

Армении // Дефектология. 2006

14. Сулейменова Р. А., О Включении детей с ограниченными возможностями в общеобразовательный

процесс

15. <https://krtutyun.wordpress.com/սերահավան-կրթություն>

16. <http://www.edu.am>

17. <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=67166>

18. <http://assessmentofeducationalneeds.com/>